ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԻ

Ք.Մասիս

27.01.2025թ
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Հակոբյան- համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Նվարդ Սահակյան- համայնքի ղեկավարի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Անգելինա Խաչատուրյան - համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /զարգացման և ներդրումների գծով/

Հանձնաժողովի անդամներ՝

Ծովինար Գալստյան- աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Սամվել Համբարձումյան-<<Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքի ենթակառուցվածքների սպասարկում>> ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Տիգրանուհի Սուքեյան - ՀԵԾ <<Աստղաբնակ>> ՀԿ-ի նախագահ

Արսեն Եղիազարյան-համայնքի ավագանի

Լիլիթ Բաբայան- համայնքի բնակիչ

Արմեն Գրիգորյան - կամավոր

Մակիչ Պողոսյան – կամավոր

Օրակարգ

Մասիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում իրազեկման փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Նորայր Հակոբյանին,

Նա արձանագրեց, որ Մասիս համայնքի ղեկավարի 10.01.2025թ հաստատած մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցի համաձայն ՝ իրազեկման փուլն ավարտվել է:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Նվարդ Սահակյանին,

Նա ներկայացրեց իրազեկման մեկնարկի և ավարտի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն"

- Համայնքի բնակավայրերում հանդիպումների, լսումների, քննարկումների կազմակերպում, մասնակցային բյուջետավորման գործընթացում բնակչության մասնակցության իրավունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում, խրախուսում բնակչության ակտիվ ներգրավվածությանը ծրագրի իրականացման փուլերում:
- Թաուն Հոլ ձևաչափով հանրային քննարկման կազմակերպում:
- Հանրային քննարկումներ առցանց սոցիալական հարթակներում:
- Ծրագրի մեկնարկի մասին և ընթացքի մասին իրազեկման տարածում համայնքապետարանի պաշտոնական կայք էջում և սոցիալական հարթակներում:

- Հանրային մարդաշատ վայրերում իրազեկող պաստառների տարածում:

Հանձնաժողովը որոշեց.

Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլի ամփոփումը գնահատել դրական:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նորայր Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անգելինա Խաչատուրյան